

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՊՈՒՏԱՏՆԵՐ
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ, ԶՈՐԻ
ԲԱԼԱՅԱՆԻՆ, ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՍԻՄԵՈՆ ԲԱԲԱՅԱՆԻՆ,
ՎԱՉԱԳԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Մոսկվա, «Մոսկվա» հյուրանոց

Շնորհակալություն Ձեր շնորհավորական հեռագրի համար: Ձեր հերոսական արարքը ցնցեց խիղճը ողջ աշխարհի հայության և հայ ժողովրդի օտարազգի բարեկամների, որով լիուլի կատարեց իր դերը: Այժմ պահն է արդեն, որ Դուք բավ համարեք հացադուլը և մեր կողքին անցնեք նոր միջոցառումների իրագործման, մինչև հաղթանակը արդարության: Ընդհատել այս պայքարը՝ պիտի լինի մեր մի տեսակ դասալքում, ինչ որ Ձեզ չի սազի: Դուք պարտավոր եք ապրել ու պայքարել, մի վախենաք կյանքից, մի վախենաք հարատև պայքարից: Պայքարի ճանապարհը առավել հերոսական է, քան նպատակին հասնելը: Ամենայն Հայոց Հայրապետը հրավիրում է Ձեզ թողնել հացադուլը և գալ Երևան՝ ստանալու նրա օրհնությունը:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
24 սեպտեմբեր 1990 թ.